ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	ՀՕ-213-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Օրենք	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2017.12.13/74(1349) Հոդ.1228	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ Ազգային ժողով	*Ընդունման ամսաթիվը*	17.11.2017
Ստորագրող մարմինը	ՀՀ Նախագահ	*Ստորագրման ամսաթիվը*	06.12.2017
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	13.01.2018	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ՕՐԵՆՔԸ «ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն

Ընդունված է 2017 թվականի նոյեմբերի 17-ին

«ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի նոյեմբերի 20-ի ՀՕ-264 օրենքի (այսուհետ՝ Օրենք) վերնագրից և տեքստից հանել «ազգաբնակչություն» բառը և դրա հոլովաձևերը:

Հոդված 2. Օրենքի նախաբանի երկրորդ պարբերությունը «բարենպաստ» բառից հետո լրացնել «էկոլոգիապես անվտանգ» բառերով, իսկ «էկոլոգիական բարձր կուլտուրա բառերը» փոխարինել «էկոլոգիական մշակույթ» բառերով:

Հոդված 3. Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի առաջին, երկրորդ, երրորդ պարբերություններում, 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետում և 5-րդ հոդվածի 1-ին մասում «կուլտուրա» բառն ու դրա հոլովաձևերը համապատասխանաբար փոխարինել «մշակույթ» բառով ու դրա հոլովաձևերով:

Հոդված 4. Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության «էկոլոգիական կուլտուրայի արմատավորմանը, բնապահպանության և բնօգտագործման» բառերը փոխարինել «էկոլոգիական մշակույթի արմատավորմանը, բնապահպանության, բնօգտագործման և էկոլոգիական անվտանգության» բառերով, «անձին և» բառերը՝ «անձի» բառով, իսկ «նրանց» բառը՝ «անձի» բառով:

Հոդված 5. Օրենքի 3-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «բ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ) նպաստել էկոլոգիական դաստիարակության և մշակույթի ձևավորմանը, մարդու, հասարակության ու շրջակա բնական միջավայրի փոխներգործությունների ներդաշնակեցմանը, էկոլոգիապես գրագետ անձի ձևավորմանը:»:

Հոդված 6. Օրենքի 4-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ «է - ժ» կետերով.

«է) էկոլոգիական կրթության և դաստիարակության բնագավառում նորարարական գիտական գործունեության խրախուսումը.

ը) էկոլոգիական կրթության և դաստիարակության բնագավառում սովորողների, մանկավարժների, ինչպես նաև

պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության, զանգվածային լրատվական միջոցների և հասարակական կազմակերպությունների միջև համագործակցության խրախուսումը.

թ) էկոլոգիական կրթության ընդլայնումը կայուն զարգացման այլ ոլորտների՝ տնտեսական, սոցիալական և մշակութային, փոխկապակցված հիմնախնդիրների ներառմամբ.

ժ) էկոլոգիական կրթության որակի շարունակական բարելավումը միջազգային չափանիշներին համապատասխան:»:

Հոդված 7. Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Կրթության համակարգի բոլոր օղակներում էկոլոգիական ուղղվածության առարկաների դասավանդումն իրականացվում է պետական կրթական չափորոշիչներին, ինչպես նաև կայուն զարգացման սկզբունքներին համապատասխան:

Էկոլոգիական կրթությունը հանրակրթական (այդ թվում՝ նախադպրոցական) մակարդակում իրականացվում է էկոլոգիական ուղղվածություն ունեցող առարկաներում (ուսումնական պարապմունքներում) ներառված թեմաների միջոցով:»:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ ամիս հետո:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ

Ս. Սարգսյան

2017 թ. դեկտեմբերի 6
Երևան
ՀՕ-213-Ն